



Հաստատված է՝

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր Գիտա-վերլուծական կենտրոնի խորհրդի 25.06.2014թ. թիվ 01-Ա որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
ՄԱԳՂԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԳՐԱՎՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ  
(AMICUS CURIAE)**

**№ 01-14-Ա**

25.06.2014թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի (**այսուհետ՝ Կենտրոն**) խորհուրդը, մասնակցությամբ խորհրդի համակարգող Գևորգ Գյոզալյանի, անդամներ Լիլիթ Գրիգորյանի, Լյուդվիկ Դավթյանի և Իրինա Փիլոյանի,

քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված «Մագդա Եղիազարյանի ներկայացուցիչներ Արայիկ Ղազարյանի և Արտակ Զեյնալյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4 –րդ մասի, 139-րդ հոդվածի 2-րդ մասի, 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

տալիս է սույն գրավոր մեկնաբանությունները հետևյալի մասին.

**Հարցի կարևորությունը.**

Սույն սահմանադրական գործով քաղաքացի Մագդա Եղիազարյանի ներկայացուցիչներ Արայիկ Ղազարյանը և Արտակ Զեյնալյանը (**այսուհետ՝ Դիմող**) 2014 թվականի հունվարի 8-ի դիմումով ՀՀ սահմանադրական դատարանից խնդրել են որոշել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (28.11.2007թ. ՀՕ-269-Ն)<sup>1</sup> 136-րդ հոդվածի 4 –րդ մասի, 139-րդ հոդվածի 2-րդ մասի, 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ, 18-րդ, 19-րդ, 83.5-րդ

<sup>1</sup> Քննարկվող սահմանադրական դիմումը ՀՀ սահմանադրական դատարան մուտք անելու նախորդ օրը՝ 07.01.2014թ., ուժի մեջ է մտել ՀՀ վարչական դատավարության նոր օրենսգիրքը (05.12.2013թ. ՀՕ-139-Ն), որով անհատական սահմանադրական դիմումում բարձրացված հարցերն այլ կերպ են կարգավորված:

հողվածներին համապատասխանության հարցը:

Դիմողի բարձրացրած խնդիրն ըստ էության վերաբերվում է դատական պաշտպանության իրավունքին, արդար դատաքննության, արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքներին:

**Միջամտության (մեկնաբանության շրջանակը).**

Կենտրոնը գտնում է, որ սույն գրավոր մեկնաբանության շրջանակներում վիճարկվող նորմերի սահմանադրականության հարցը պարզելու համար անհրաժեշտ է դրանք դիտարկել ՀՀ Սահմանադրությամբ սահմանված դատական պաշտպանության իրավունքի, արդար դատաքննության և արդարադատության մատչելիության համատեքստում՝ անդրադարձ կատարելով հետևյալ հարցադրումներին՝

- ա) *ինչպիսի՞ն է դատական պաշտպանության իրավունքի, արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության բովանդակությունը,*
- բ) *արդյո՞ք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավակարգավորումը՝ «խախտումից հետո» եզրույթի մասով հակասում է ՀՀ սահմանադրությանը,*
- գ) *արդյո՞ք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասով, 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերով նորմատիվ իրավական ակտերի առոչինչ ճանաչելու պահանջով վարչական դատարանն զիջում է իրավունք չնախատեսելով, խաթարվել է արդար դատաքննության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքի էությունը:*

\*\*\*

**ա) Դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության բովանդակությունը.**

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՄԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՄԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՄԴՈ-690 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար՝ նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, կարևորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական

հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (**այսուհետ՝ Եվրոպական դատարան**) դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը:

Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18 հոդվածի նպատակն իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է<sup>1</sup>:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:<sup>2</sup>

ՀՀ սահմանադրության՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող 18-րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի դատական պրակտիկայում, որպես կանոն, վկայակոչվում է 19-րդ հոդվածի հետ սերտ միասնության մեջ՝ որպես իրենից մեկ միասնական իրավական երևույթ ներկայացնող: Դա մասնավորապես վերաբերում է արդարադատության մատչելիության իրավունքին՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի, որի սահմանադրական ամրագրումը դիտարկվում է 18 և 19-րդ հոդվածներում՝ միաժամանակ և միասնաբար՝ չկոնկրետացնելով դրա սահմանադրական-տեքստային հիմքը<sup>3</sup>:

Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված արդարադատության մատչելիության իրավունքի՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի հիմնարար սահմանադրական երաշխիքներն են՝ ա) դատական քննության

<sup>1</sup> ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. հունվարի 16, ՍԴՈ-673, 8-րդ կետ:

<sup>2</sup> ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

<sup>3</sup> ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջեր 222-223:

հավասարություն և արդարացիություն, բ) անկախ և անկողմնակալ դատարան, գ) դատական քննության ողջամիտ ժամկետ և դ) հրապարակայնություն:

Արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության վերաբերյալ Եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «*Դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջումներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների և դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն»<sup>1</sup>:*

Եվրոպական դատարանը միաժամանակ գտնում է. «*Բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարգավորումը, անկասկած, նպատակ ունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը, հատկապես իրավական որոշակիության սկզբունքը: Շահագրգռված անձինք պետք է հաշվի առնեն, որ այդ կանոնները պետք է կիրառվեն»<sup>2</sup>:*

Հարկ է նաև նշել, որ Եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսպիսով, ՀՀ սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով ամրագրված դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության էությունը անձի իրավունքների և ազատության պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի սահմանում է և այդ իրավունքի պատշաճ իրականացման համար պետության կողմից գործուն մեխանիզմների և մատչելի պայմանների ստեղծումն ու երաշխավորումը:

\* \* \*

**բ) Արդյո՞ք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավակարգավորումը՝ «խախտումից հետո» եզրույթի մասով հակասում է ՀՀ սահմանադրությանը.**

2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ վարչական դատավարության

<sup>1</sup> Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Philis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995:

<sup>2</sup> Perez de Rada Cavanilles v. Spain, 28 oct. 1998, Societe anonyme "Sotiris et Nikos Kouras ATTEE" v. Greece (16 nov. 2000), 16 feb. 2001:

օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «4. Մույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում վարչական դատարան կարելի է դիմել խախտումից հետո՝ եռամսյա ժամկետում, իսկ 3-րդ մասով նախատեսված դեպքում՝ առանց ժամկետային սահմանափակման»:

Նշված իրավական նորմի վերլուծությունից հետևում է, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարան կարող է դիմել խախտումից հետո՝ եռամսյա ժամկետում, եթե համարում է, որ այդ նորմատիվ իրավական ակտերով խախտվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ գլխում, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներում ամրագրված իր իրավունքները:

Ինչպես արդեն նշել ենք, ըստ Եվրապական դատարանի դատական պրակտիկայի՝ դատաքննության և դրա մասնավոր տարրը հանդիսացող մատչելիության իրավունքը «բացարձակ իրավունք» չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, բողոքի (դիմումի) ընդունելիության պայմանների, այդ թվում՝ ժամկետների առնչությամբ: Սակայն, անձի դատական քննության իրավունքի մատչելիությունը և իրավունքների պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար պետությունը կաշկանդված է պատշաճ պայմաններ, ներառյալ՝ դիմումի ընդունելիության ժամկետներ սահմանելու և մեխանիզմներ մշակելու և երաշխավորելու պարտականությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ «իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դատում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ատյանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության: Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շտկվում են, ապա կարող են վերստին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն:

Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ: Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ

*ձեռնարկելու եղանակով, ապահովելու և երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը»<sup>1</sup>:*

Կենտրոնի դիրքորոշմամբ՝ քննարկվող գործի հանգամանքներով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումը *«խախտումից հետո՝ եռամսյա ժամկետում»* մասով չի ապահովում ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված արդար դատաքննության մատչելիությունն այնքանով, որքանով այդ ժամկետում գործնականում անձի կողմից իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը վիճարկելու դիմում ներկայացնելը վարչական դատարան անհնարին է և ոչ իրական, առավել ևս, որ քննարկվող դեպքում նորմատիվ իրավական ակտերի կիրառմամբ անձի իրավունքների խախտումը կամ անձի իրավունքներին միջամտությունը միջնորդավորված է համապատասխան վարչական ակտով: Ավելին, անձի իրավունքներին ենթադրաբար միջամտող օրենքի (ենթաօրենսդրական և գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի) դրույթների սահմանադրականությունը վիճարկելու իրավունքն իրացնելու նախապայմանը օրենքի դրույթի կիրառված լինելն է վերջնական դատական ակտով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի բովանդակությունից (կամ ՀՀ վճռաբեկ դատարանի մակարդակով դրան հաղորդած իմաստից) բխում է, որ անձը ենթաօրենսդրական կամ գերատեսչական նորմատիվային ակտերի իրավաչափությունը վիճարկող հայցով կարող է դատարան դիմել այդ ակտն իր նկատմամբ կիրառված վարչական ակտի մասին *իրեն հայտնի դառնալու պահից 3-ամսյա ժամկետում*: Այսպիսի դատավարական ժամկետային սահմանափակումը, նախ, անձին զրկում է միջամտող վարչական ակտի իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու, հետևաբար նաև՝ դատական պաշտպանության իրավունքից օգտվելու հնարավորությունից, քանի որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատավարական, մասնավորապես՝ հայց ներկայացնելու, բողոքարկման իրավունքի իրականացման և վճռի օրինական ուժի մտնելու ժակետները այնպիսին են, որ վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահին միջամտող վարչական ակտն արդեն իսկ դարձած է լինում անբողոքարկելի, քանի որ վերը նշված եռամսյա ժամկետը համարվում է լրացած: Հետևաբար, ինչպես արդարացիորեն գտնում է Դիմողը, անձը կկարողանա իր իրավունքներին միջամտող վարչական ակտից դատական պաշտպանություն հայցել միայն դատական ակտի վիճարկման դատավարական ժամկետը հարգելի համարելու մասին միջնորդություն ներկայացնելու և այդ միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու պարագայում՝ անկախ այն հանգամանքից, թե իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտն անվավեր է ճանաչվել, թե այդ պահանջով հայցը մերժվել է: Նման պայմաններում էլ նշված ժամկետը բաց թողնելը հարգելի համարել-չհամարելու հարցում դատարանին հայեցողական լիազորություն տալը չի բխում արդար դատաքննության և արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքից:

Մյուս կողմից՝ վերը նշված *«խախտումից հետո՝ եռամսյա ժամկետում»*

<sup>1</sup> ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

օրենսդրական ձևակերպումը դատարաններին հնարավորություն է տալիս կամայակնորեն մեկնաբանել և հայեցողաբար հաշվարկել եռամսյա ժամկետի ընթացքի սկիզբը, քանի որ հստակ չէ, թե ո՞ր պահից պետք է հաշվել նորմատիվ իրավական ակտի կիրառման արդյունքում անձի համար իրավական հետևանքների առաջացման՝ իրավունքների խախտման ընթացքը: Այսպիսի ժամկետային սահմանափակումը որևէ կերպ չի ապահովում իրավական որոշակիության պահպանման և ողջամիտ ժամկետում գործի քննության նպատակը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է դատավարական ժամկետների խնդրին՝ այն դիտարկելով դատարանի մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքների համատեքստում: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ստորադաս դատարանի դատական ակտի բողոքարկման համար որոշակի ժամկետի սահմանումը հետապնդում է իրավաչափ նպատակ՝ երաշխավորելու իրավական որոշակիությունը: Մինևույն ժամանակ, հիմք ընդունելով, մասնավորապես, իր՝ ՍԴՈ-652, ՍԴՈ-665, ՍԴՈ-690, ՍԴՈ-719 որոշումներում ամրագրված՝ իրավական դիրքորոշումները, ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ ստորադաս դատարանի դատական ակտը հրապարակվելու պահից որոշակի ժամկետում բողոքարկելու վերաբերյալ դրույթներ սահմանելիս, օրենսդիրը պարտավոր է՝ ելնելով անձի դատարանի մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքներից, օրենսդրորեն անհրաժեշտ նախադրյալներ ամրագրել դրանց երաշխավորման ու ապահովման համար: Սահմանադրական դատարանը միաժամանակ գտել է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, **թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար<sup>1</sup>:**

Վերոգրյալի հիման վրա նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը վիճարկելու համար անհրաժեշտ է, որպեսզի անձն իր տնօրինության ներքո ունենա իր իրավունքներին միջամտող վարչական ակտը կամ դրա վերանայման արդյունքում կայացված դատական ակտը, որպեսզի կարողանա նշված ակտի ուսումնասիրության հիման վրա իր դիմումում, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքում հիմնավորել, պատճառաբանել նորմատիվ իրավական ակտի անհամապատասխանությունն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին և դրա արդյունքում իր իրավունքներին միջամտությունը: Մինչդեռ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորմամբ նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը վճարկելու ժամկետների հաշվարկի սկիզբ համարելով «խախտման» պահը, օրենսդիրն անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը կախվածության մեջ է դնում դատական հայեցողությունից՝ բաց թողնված ժամկետը հարգելի կամ

<sup>1</sup> ՀՀ սահմանադրական դատարան, 16 հոկտեմբերի 2012 թ., ՍԴՈ-1052, 8-րդ կետ:

անհարգելի համարելու առումով:

Այսպիսով, վիճարկվող եզրույթը կարող է մեկնաբանվել լայն իմաստով՝ դառնալ անորոշության, դատավարական ժամկետների խախտման և դրանով իսկ պայմանավորված՝ անձի դատական պաշտպանության, արդար դատաքննության և արդարադատության մատչելիության իրավունքի խախտման պատճառ:

Այլ կերպ ասած, նշված սահմանադրական իրավունքների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ է հստակություն և որոշակիություն, ինչը չի բխում վիճարկվող դրույթի տառացի մեկնաբանությունից:

Կենտրոնն անհրաժեշտ է համարում հիշատակել նաև սահմանադրական դատարանի 2006թ. նոյեմբերի 16-ի ՄԴՌ-665 որոշումը, որով ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է. *«Իրավական պետությանն անհարիր է այն իրավիճակը, երբ օրենքով ու իրավակիրառական պրակտիկայի կողմից բացառվում են ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների հիման վրա առանձին իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցի դատական վերահսկողությունը»:*

Սույն հարցի հետ կապված, Կենտրոնը հարկ է համարում անդրադարձ կատարել նաև *օրենքի որոշակիությանը*, ինչն իրավական պետության պայմաններում սկզբունքային նշանակություն ունի:

Եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներում<sup>1</sup> անդրադառնալով օրենքի որոշակիությանը, մասնավորապես նշել է. *«օրենքը պետք է լինի մատչելի և ձևակերպված լինի այնքան հստակ, որ անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի կանխատեսել այն հետևանքը, որը կառաջացնի որոշակի գործողության կատարումը»:*

Օրենքը պետք է *իրավական լինի*, այսինքն՝ իր հիմքում պետք է ունենա *իրավունքի գերակայության սկզբունքը*: Օրենքը դառնում է անհատի ազատության, անվտանգության և սեփականության պաշտպանը, նրա իրավունքների իրացման երաշխավոր միայն այն դեպքում, երբ *իրավական է*: Իրավական օրենքին ներկայացվող պահանջներն են *իրավական որոշակիությունը, հստակությունը և կանխատեսելիությունը*:

Հաշվի առնելով վերոգրյալը, Կենտրոնը 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված *«խախտումից հետո»* եզրույթի մասով դատարանի մատչելիության իրավունքի արդյունավետ իրացման տեսանկյունից խնդիր է տեսնում հաշվի առնելով այն հանգամանքը, որ նորմի քննարկվող բովանդակությունն անորոշ է ձևակերպված:

\*\*\*

զ) Արդյո՞ք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասով, 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերով նորմատիվ իրավական ակտերի առոչինչ ճանաչելու պահանջով վարչական դատարան դիմելու իրավունք չնախատեսելով խաթարվել է արդար դատաքննության սահմանադրական իրավունքի

<sup>1</sup> Stu` Sunday Times v. the United Kingdom, judgment of 26 April 1979, Series A no. 30, p. 31, l. 49;

Rekvnny v. Hungary [GC], no. 25390/94, l. 34, ECHR 1999 III;

Rotaru v. Romania [GC], no. 28341/95, l. 55, ECHR 2000 V;

Maestri v. Italy [GC], no. 39748/98, l. 30, ECHR 2004-I:



**բաղադրատարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքի էությունը.**

2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածը սահմանում է.

1. Այն դեպքում, երբ վիճարկվում է որևէ նորմատիվ իրավական ակտի համապատասխանությունը ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտին, դատարանը դատական ակտ կայացնելիս կարող է ստուգել նաև տվյալ ակտի համապատասխանությունն այլ՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին, եթե դա վերապահված չէ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի իրավասությանը:

2. Ստուգումից հետո պարզելով վիճարկվող ակտի անհամապատասխանությունն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտին՝ վարչական դատարանն այն անվավեր է ճանաչում այդ հիմքով՝ անկախ հայցվորի պահանջից:

3. Սույն օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված գործերով դատական ակտերը վարչական դատարանը կայացնում է գործը վարույթ ընդունելու օրվանից հետո՝ քառամսյա ժամկետում:

2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ից 3-րդ մասերը սահմանում են.

1. Նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի որոշումները պաշտոնական հրապարակման պահից Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում պարտադիր են բոլորի համար:

2. Անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտերն իրենց իրավաբանական ուժը կորցնում են դրանք անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի որոշման պաշտոնական հրապարակման պահից (*ex nunc*), բացառությամբ սույն հոդվածի 5-րդ և 9-րդ մասերով նախատեսված դեպքերի:

3. Անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտերի վրա հիմնված՝ վարչական դատարանի որոշման ընդունմանը նախորդող ժամանակահատվածում ընդունված և կատարված վարչական կամ դատական ակտերը վերանայման ենթակա չեն, սակայն վարչական դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելու պահից այլևս չեն կարող կիրառվել:

Վերը նշված իրավական նորմերի բովանդակությունից (կամ դատարանի կողմից դրան հաղորդած իմաստից) բխում է, որ անձը հայց հարուցելու իրավունք չունի՝ ենթաօրենսդրական կամ գերատեսչական նորմատիվ իրավական ակտերը կամ դրանց դրույթները առոչինչ ճանաչելու (առոչինչ լինելը հաստատելու) պահանջով: Նորմատիվ իրավական ակտերի առոչինչ ճանաչելու պահանջով վարչական դատարան ղիմելու իրավունք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով չի նախատեսվել, ինչով, Դիմողի կարծիքով, խաթարվել է արդար դատաքնության իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքի էությունը:

Կարծում ենք, Դիմողի վերը շարադրված պնդումն արդարացի չէ, և չի հիմնավորվում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ, 140-րդ հոդվածի 1-ինից 3-րդ մասերի դրույթների սահմանադրականության

վիճարկման մասին վերջինիս դիրքորոշումը:

Նախ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը (հոդված 63) ցույց է տալիս, որ ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է լինել ինչպես անվավեր, այնպես էլ առոչինչ: Ընդ որում, անվավեր վարչական ակտը կարող է լինել ինչպես առ ոչինչ հանդիսացող, այնպես էլ առ ոչինչ չհանդիսացող վարչական ակտ: Այլ կերպ ասած՝ առոչինչ վարչական ակտը բոլոր դեպքերում անվավեր է, բայց ոչ բոլոր դեպքերում է, որ անվավեր վարչական ակտը առ ոչինչ է: Առ ոչինչ վարչական ակտը անվավեր վարչական ակտի տեսակ է: Ուստի «անվավեր վարչական ակտ» հասկացությունն ավելի լայն է, քան «առ ոչինչ վարչական ակտ» հասկացությունը:

Համանման կարգավորում է նախատեսված նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում, որի 74-րդ հոդվածի 1-ին, 2.1-րդ մասերի վերլուծությունը ցույց է տալիս, որ անվավեր իրավական ակտի տեսակ է հանդիսանում իրավաբանական ուժ չունեցող իրավական ակտը, իսկ իրավաբանական ուժ չունեցող իրավական ակտն առ ոչինչ իրավական ակտ է (հոդված 61.1): Ընդ որում, նշված դրույթներն ինքնին հանդիսանում են առ ոչինչ իրավական ակտերի դատական կարգով վիճարկման նյութաիրավական հիմքերը: Իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 139-րդ, 140-րդ հոդվածներն էլ կարգավորում են նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու՝ անվավեր, այդ թվում՝ առ ոչինչ (իրավաբանական ուժ չունեցող) ճանաչելու իրավահարաբերությունները: Ուստի, նշված հոդվածների սահմանադրաիրավական բովանդակությունը դատական պաշտպանության և արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքների երաշխավորման տեսանկյունից, մեր դիրքորոշմամբ, կասկած չի հարուցում:

Արտասահմանյան երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության, ԱՊՀ անդամ մի քանի երկրների օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված երկրների վարչական դատավարական օրենսդրության մեջ նույնպես բացակայում են նորմատիվ իրավական ակտերն առ ոչինչ ճանաչելու վերաբերյալ դրույթները:

Կենտրոնը գտնում է, որ քննարկվող խնդրի հետ կապված՝ գտնում ենք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 139-րդ, 140-րդ հոդվածների մեկնաբանումն ու կիրառումը սովորական դատարանների խնդրին է և դուրս է սահմանադրական դատարանի վերահսկողությունից:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 05.02.2010 թվականի ՍԴՈ-864 և 14.09.2010 թվականի ՍԴՈ-914 որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ սահմանադրական դատարանի կողմից օրենքի բացի սահմանադրականության հարցի քննության իրավական հնարավորության առնչությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-864 որոշմամբ սահմանվել է, որ *«Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառ*

պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որ խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

«Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմատիվ պատվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:<sup>1</sup>

ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-914 որոշմամբ սահմանվել է, որ «Օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը»:<sup>2</sup>

ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումներից կարելի է անել այն հետևությունը, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն ներքոնշյալ երեք իրավիճակներից որևէ մեկի առկայության պարագայում.

- օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ.
- օրենսդրության մեջ առկա են համապատասխան իրավական բացը լրացնելու համապատասխան իրավական երաշխիքներ, սակայն դրանց կապակցությամբ ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա.
- առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը.

Կենտրոնը գտնում է, որ Դիմողի պարագայում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածը նախատեսում է նորմատիվ իրավական

<sup>1</sup> ՀՀ սահմանադրական դատարան, 05 փետրվարի 2010 թ., ՍԴՈ-864, 6-րդ կետ:

<sup>2</sup> ՀՀ սահմանադրական դատարան, 14 սեպտեմբերի 2010 թ., ՍԴՈ-914, 7-րդ կետ:

ակտը ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտին անհամապատասխանության հիմքով անվավեր ճանաչելու հնարավորություն, նշված հարցի քննարկումը դուրս է սահմանադրական դատարանի քննության առարկայից:

Պարզ ասած, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ, 140-րդ հոդվածի 1-ինից 3-րդ մասերի դրույթները՝ «անվավեր ճանաչելու» մասով հակասահմանադրականության փաստումը սահմանադրական դատարանի կողմից ոչ մի իրավական հետևանք առաջացնել չի կարող, որովհետև ընդամենն անվավեր կճանաչվի գոյություն չունեցող մի բան:

Վերոշարադրյալ հիմնավորմամբ Կենտրոնը գտնում է, որ չնայած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (ի տարբերություն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի) վիճարկվող հոդվածներում բացակայում է «առ ոչինչ» եզրույթը, այնուամենայնիվ, դրանք համարել հակասահմանադրական, մասնավորապես՝ դատական պաշտպանության, արդար դատաքննության և արդարադատության մատչելիության իրավունքները սահմանափակող կամ խախտող, արդարացի չէ: Այլ հարց է, որ քննարկվող դրույթները Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտով կիրառվել են այլ մեկնաբանությամբ:

*«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածում նշված գործերով դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ գտել է, որ այդ դրույթը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:*

### **Եզրակացություն.**

Ամփոփելով գրավոր մեկնաբանությունը, Կենտրոնը, համադրելով դատարանի մատչելիության վերաբերյալ ներպետական և միջազգային իրավական ակտերով նախատեսված կարգավորումները, գալիս է այն եզրահանգման, որ 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված **«խախտումից հետո»** եզրույթի մասով դատարանի մատչելիության իրավունքի արդյունավետ իրացման տեսանկյունից կարող է խնդրահարույց լինել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նորմի քննարկվող բովանդակությունն անորոշ է ձևակերպված:

Հարկ է նշել, որ պետությունների վրա դրված է հստակ պարտավորություն՝ առաջինը պաշտպանելու մարդու իրավունքները և առաջին հերթին իրենց սեփական իրավական համակարգի շրջանակում: Պետությունները նաև պետք է լրացուցիչ երաշխիքներ սահմանեն՝ ապահովելու համար, որպեսզի անձինք արդյունավետորեն օգտվեն իրենց այդ իրավունքներից: Անձանց՝ այդ իրավունքները սահմանափակող նորմի առկայությունը ՀՀ օրենսդրության մեջ հանգեցնում է պետության պոզիտիվ պարտավորության խախտման, ինչպես նաև արգելափակում է խախտված

իրավունքները վերականգնելու բոլոր հնարավորությունները: Այս սահմանափակումներն իրենց հերթին առաջ են բերում դատարանի մատչելիության իրավունքի խախտում:

2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածը և 140-րդ հոդվածի 1-ից 3-րդ մասերով սահմանված իրավական նորմերի առնչությամբ Կենտրոնը հարկ է համարում նշել, որ այդ իրավական նորմերը նախատեսում են նորմատիվ իրավական ակտը ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտին անհամապատասխանության հիմքով անվավեր ճանաչելու իրավական հիմք, սակայն այլ հարց է, որ Հայաստանի Հանրապետության դատական ատյանները՝ ելնելով դատական հայեցողությունից, կոնկրետ գործով կայացված դատական ակտերով կարող են համապատասխան նորմը կիրառել այլ մեկնաբանությամբ, ինչպես և եղել է Դիմողի պարագայում:

Համակարգող՝

Գևորգ Գյոզալյան

Քարտուղար՝

Իրինա Փիլոյան